



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

09 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիայանի
Անդամակցությամբ՝ Ռ. Նազարյանի
Ա. Խաչափրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Աշոտ Մանուկյանի և քաղաքացի Արամ Բարեղամյանի
անհարական դիմումներով գործը քննության ընդունելու մասին հարցը¹,

Պ Ա Ր Զ Ե Յ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ
Աշոտ Մանուկյանը և Արամ Բարեղամյանը 2012թ. հոկտեմբերի 12-ին դիմել են ՀՀ
սահմանադրական դատարան՝ խնդրելով. «....1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ
հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19 և 93-րդ հոդվածներին,

¹ Չնայած նշված դիմումները ներկայացվել են փարբեր դիմող սուբյեկտների կողմից, սակայն, հաշվի առնելով, որ դիմումները վերաբերում են միևնույն հոդվածների սահմանադրակառության հիմնախնդրին և ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ բերված են միևնույն իրավական փաստարկները, դատական կազմը նպարակահարմար է գրնում նշված երկու դիմումների մասով ներկայացնել մեկ միասնական որոշում:

101-րդ հոդվածի 6-րդ մասին հակասող և անվավեր, և/կամ՝ 2. ՀՀ դադարական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այնքանով, որքանով չի նախադասում ընդհանուր իրավասության դադարանների կողմից դադարական ակտ կայացնելիս ՀՀ սահմանադրական դադարանի՝ որոշման պարզաբանական մասում արդահայտած իրավական դիրքորոշումների պարփառի լինելու պայման, այդպիսով շրջանցելով Սահմանադրության նորմերի անմիջական գործողության սկզբունքը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 14.1, 18, 19 և 101-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Հսկու դիմողների՝ սահմանադրահրավական վեճի առարկա դրույթները հնարավորություն են դրախս դադարաններին նոր հանգամանքի հիմքով հարուցված դադարական ակտի վերանայման արդյունքում իրացնել այն լիազորությունների ծավալը, ինչ «սովորական» վարույթների ժամանակ: Նոր հանգամանքով դադարական ակտի վերանայման դեպքում ՀՀ վճռաբեկ դադարանը չի կարող ունենալ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 419-րդ հոդվածով սահմանված լիազորությունների ամբողջ ծավալը, այլ կաշկանդված է նոր հանգամանք համարվող՝ ՀՀ սահմանադրական դադարանի որոշմամբ և չի կարող Սահմանադրությանը հակասող նորմ պարունակող դադարական ակտը թողնել ուժի մեջ:

Դիմողները գիտում են, որ նոր խմբագրությամբ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածը լիազորում է դադարանին «չփոփոխել վերանայված դադարական ակտի եզրափակիչ մասը», ինչը հակասում է ՀՀ սահմանադրական դադարանի ՍԴՈ-984 որոշմանը, մասնավորապես՝ այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ հակասահմանադրական նորմ կիրառած դադարական ակտի վերանայումը պեսք է դեղի ունենա փաստի ուժով, որը ենթադրում է, որ վերանայման համար միակ պայման պեսք է հանդիսանա դադարական ակտում հակասահմանադրական նորմի կիրառման փաստը և որևէ այլ հանգամանք, պայման, փաստ կամ փաստարկ որպես այլընդուրանք չի կարող առաջ քաշվել կամ սահմանվել ի հավելումն նշված փաստի:

Դադարական կազմի կարծիքով, դիմումների և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ անհադարական դիմումներով գործը սահմանադրական դադարանի կողմից պեսք է քննության ընդունվի մասնակիորեն:

Այսպես, ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դադարանի ՍԴՈ-984 որոշումը: Նշված որոշման մեջ ՀՀ սահմանադրական դադարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը՝ սահմանադրահրավական այն բովանդակությամբ, որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դադարան ակտը օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապարասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ մարդանշելով նաև, որ իրավակիրառական պրակտիկայում նշյալ դրույթը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրա՝

սույն որոշման մեջ արգահայտված սահմանադրահրավական բովանդակությանը: Նեփսարար, այս դրույթի մասով առկա է անհարական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախադրեսված հիմք:

Ինչ վերաբերում է **ՀՀ դադարական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասին**, դադարական կազմն արձանագրում է, որ նշված նորմում դեղ գրած իրավադրույթը դիմողների նկարմամբ չի կիրառվել: Անհարական դիմումին ներկայացվող պահանջներից է դիմողի նկարմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիրացված դադարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառման փասբը: Այս պայմանը, ի թիվս այլնի, նախադրեսված է «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴԱՌ-21 որոշման մեջ ձևավորել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհարական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դադարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Հաշվի առնելով ասվածը և դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կերպերով՝ **ՀՀ դադարական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով** անհարական դիմումներով գործի քննության ընդունումը ենթակա է մերժման:

Դադարական կազմն արձանագրում է, որ **ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի** վերաբերյալ առկա է ՍԴԱ-984 որոշումը:

Ինչ վերաբերում է **ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի** դրույթներին, ապա դադարական կազմը գրնում, որ դրանց մասով առկա չեն դիմումների քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դադարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դադարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դադարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դադարանում գործի դադարնություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դադարական պաշտպանության բոլոր միջոցները:

Դադարական կազմն առաջարկում է՝ հաշվի առնելով, որ քաղաքացիներ Ա. Մանուկյանի և Ա. Բարեղամյանի գործերը՝ քննության ընդունված մասով վերաբերում են նույն հարցին, միավորել և քննել նույն դադարական նիստում:

Դիմողները նաև միջնորդել են իրենց ազարել պետքուրքի վճարումից՝ վկայակոչելով, որ «Պետական գործը մասին» ՀՀ օրենքով քրեական դադարավարության մասնակիցների կողմից պետքական գործը վճարում նախադրեսված չէ: Դադարական կազմը գրնում է, որ բավարար հիմքեր չկան սահմանադրական դադարավարությունում անձին պետքուրքի վճարումից ազարելու համար:

Ելեկով վերոգրյալից եւ դեկավարվելով՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32-րդ և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 1 դադարական կազմը

Ո Ր Ո Շ Ե Յ.

1. Քաղաքացի Աշոք Մանուկյանի և քաղաքացի Վրամ Բարեղամյանի անհապական դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ դադարական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննության ընդունումը մերժել:

2. Քաղաքացի Աշոք Մանուկյանի և քաղաքացի Վրամ Բարեղամյանի անհապական դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դադարավարությանը որպես պարասիստող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:



9 նոյեմբերի 2012 թվականի
ՍԴԿԸ / 1 - 25